ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱՏԵՐԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լույս է տեսել Ս.Պապիկյանի «Թատերագիտական տերմինների համակարգային և կառուցվածքաիմաստաբանական քննություն» աշխատությունը (Երևան, 2008, հեղինակային հրատ., 131 էջ): Աշխատանքը բաղկացած է հինգ գլխից: Առաջին գլխում («Տերմինի տեսությանը առնչվող մի քանի հարցեր») դիտարկվում են տերմինի տեսությանը և պատճառաբանվածությանը վերաբերող հարցեր, քննարկվում են արվեստագիտական տերմինների շարքում թատերական արվեստին վերաբերող տերմինների տեղը և դերը:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է թատերագիտական տերմինաբանության զարգացմանը հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում: Հիմք ընդունելով Գ. Զահուկյանի հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը և հայ թատրոնի Գ.Գոյանի կատարած շրջաբաժանումը Ս. Պապիկյանը թատերագիտական տերմինաբանությունը բաժանել է հետևյալ հիմնական փուլերի.

1. 5–19–րդ դարի կեսերը ա) 5–11–րդ դարեր, բ) 11–19–րդ դդ.,
2. 19–րդ դարի կեսերից մինչև մեր օրերը:

Տերմինների քննությունը լեզվի պատմության զարգացման ընթացքում ինքնին հետաքրքիր է: Այն ունի նաև կիրառական նշանակություն, քանի որ այդ քննության արդյունքում կարող են կրկին շրջանառության մեջ դրվել և գործածվել հանիրավի մոռացված, շրջանառությունից դուրս եկած լեզվական միավորներ: Աշխատության հաջորդ երեք գլուխներում ներկայացված է թատերագիտական տերմինների իմաստաբանական, ծագումնաբանական և բառակազմական վերլուծությունը: Թատերագիտական տերմինային մանրահամակարգն ըստ ծագումնաբանական շերտերի ներկայացված է բավականին ուշագրավ բաշխմամբ առանձնացված են հին կամ գրաբարյան տերմինները, արևմտահայերեն, բարբառային տերմինների շերտերը և համընդհանուր գործածություն ունեցող թատերական տերմինները, որոնք առկա են հայերենի զարգացման բոլոր փուլերում:

Գիտական սույն ուսումնասիրությունը կատարված է բարեխղճորեն, գիտական պատշաճ մակարդակով:

Հավելվածում տրված է թատերագիտական տերմինների բառացանկը:

Գիրքը օգտակար կարող է լինել բանասերների, մշակույթի պատմությամբ զբաղվողների համար:

ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու